

նեղո՜ւ մեզի ոչրիշներ՝ որ խակապես գոշրկ են գրական գեղեցիկը արտասիրելո՜ւ կարողութենէն:

Այն ինչ որ Ա. Զօսյանեան կատարած է երկար տարիներ հայկ. գրականութեան անդամականին մէջ ունեւնաւորելով, գտելով, իրական արժէքները մատնանշելով, քաջաշէրտելով ոչ առաջնորդելով, արդեօք պիտի ունենայ իր արժանաւոր յաջորդը՝ որ գիտակցօրէն, ձեռնհասօրէն շարունակէ իր դերը:

Մեզի, մեր ժողովուրդին համար կը պակսի տակաւին ողջ խորքով հարուստ, և արուեստի պահանջներով կատարեալ գրականութիւն մը: Մեր աշխարհիկ գրականութիւնը դեռ դարձ մը կեանք չունի, դեռ կարօտ է յեղաշրջումի ոչ կատարելագործումի շրջաններէն անցնելո՜ւ: Մենք սովորութիւնը ունինք դիշխան խանդավառութիւնը և գրագետի դասկնայականով զարդարելո՜ւ ձախտը բոլոր անոնց՝ որոնք կտոր մը կոկիկ հայերէն կը գրեն, և կամ խաբուսիկ շարք մը կը

զարնեն կցկտոր, զիրար չընկող քանի մը էջերո՜ւ: Հենք ընթերցումս թէ գրական «գեղեցիկը» արտադրելո՜ւ համար կարեւոր է ամեն քանէ առաջ ունենալ լայն զարգացում, տաղանդ, փիլիսոփայական խորք, ձաշակ, համալսփութեան զգացում. առանց այդ յատկութիւններուն չէ կարելի արեղծել մնայուն գործեր և արժանալ գրագետի և հեղինակի անունս:

Յայտնի է թէ այսօր գեղարուեստի ամեն մարդի մէջ կայ ընդհանուր անկում մը բոլոր ժողովուրդներո՜ւ քով: Լոր ընթերցումներ, Լոր զգայնութիւններ կը տարտղնեն ոչ կը ցրտեն մտաշուրակականութեան ուժերը դէպի տպաշուրակաւոր, գերիրապաշտ, գոյութեանապաշտ հոսանքներո՜ւ անընդհատ անաւերներ:

Այդ հոսանքներո՜ւ ազդեցութիւնը տակաւ առ տակաւ մուտք կը գործէ ևս մեր մէջ, տակաւին դեռ կը դիմադրենք և կը յռասանք չտիրապետող:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

ԲԱՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՆԱԻԱՐԶԵՑԻՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ԳՐԻԶ

Հոգեկից Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեանին

Սեպտեմբեր 7, 8 և 9 օրերն է որ կը պանծացնէ Հայրապետը, անոնցմով փառաւորելով Աստուածամօր Ծննդեան յիշատակը: Որքան նուիրական էր այդ տօնախմբութիւնը ազգիս քով հին դարերուն, յատկապէս հեղինակիս օրով, նոյնքան, և առաւել եւս նուիրական է եւ սիրելի այդ օրը՝ Միւթարեաններու: Նուիրական եւ խնկելի, ո՛չ միայն անոր համար՝ որ այն շնորհաբեր օրուան մէջ երկուքուկէս դար առաջ կը հաստատուէր Միւթարայ Ուխտը եւ իր հուսկ հանդուրանն ու դադարը կը գտնէր փոքրիկ եւ ամայի կղզեկիս մէջ, այլ նաեւ անոր համար՝ որ այդ Տունը, զոր Ինքը, Երկնքի եւ երկրի հօր Դշխոյն հիմնեց, եւ զոր կը հաճի միշտ գեղափայլ պահել ու պաշտպանել, եւ կեանքի յարածուի ուղիքին ամենախոռով վայրկեաններուն իսկ՝ մայրաքար յանձանձել: «Քանզի մեծ իսկ է զօրութիւն, — ինչպէս կ'ըսէ Նարեկայ մշտամբմունջ տատրակը Գրիգոր⁽¹⁾ — զհնացեալն՝ անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութեան, քան յանդոյից ստեղծագործել»:

Եւ կա՞ր արդեօք մեծագոյն վտանգ մը ջուրերէ չըջապատուած մեր այդ ճնշին բոյնին համար՝ քան վերջին փոթորիկը, 1939–1945ի պատերազմը, որ իր կոհակներու ամէհի սաստկութեամբ կը սպառնար հարուածել այդ թեթեւ մակոյկը՝ եւ զայն իր անյատակ անդունդներուն մէջ ի

սպառ թաղել: Տխուր օրեր, ուր սեւ մահն ու աւեր իրենց դժխեմ թելերով յարատեւ մեր գլխուն վերեւ կը սաւառնէին անողոք, եւ որոնց դիշատիչ մագիլներէն, ով հրա՛շք, Միւթարայ Ուխտը բովանդակ, հեռաւորներովն ու նաւահանգստին մէջ բռնակ մերձաւորներով՝ ողջ եւ անվնաս կը մնար, այլոց եւս հանդիսանալով՝ յաւէտ վեհանձն՝ փրկարար:

Ուստի որդիական երախտապարտ զգացման արտայայտութիւն մը կ'ուզենք բարձրացնել ասով մեր երկնաւոր զթառատ Մօր եւ ամենայաղթ Պաշտպանին, որ քաղաքական ու հոգեկան ամենազոհաբեր պարագաներուն իսկ՝ մշտապատրաստ գտնուած է մեր Երանաշնորհ Հօր Միւթարայ անլուրի ձայնին եւ անոր որդւոց պաղատանքին՝ փութացնելով իր օժանդակութիւնը: Որ ով հետեւ ամենակործան պայքարի ահադին աղէտներէն պրծած այսպիսի Տիրուհւոյ մը ասպարին ներքեւ, մեր անդորրաւէտ նաւահանգստին հաղիւ չեմքը կոխած՝ կը կրկնենք Իրեն Որդեգրութեան մեր անյեղլի դաշինքը, լիայոյս՝ թէ ինչպէս անցելոյն մէջ՝ նոյնպէս ապագային եւ մինչեւ յաւիտեան անպակաս պիտի ընէ Ամենասուրբ Կոյսն իր պաշտպանութիւնը մեզմէ, եւ պիտի հաճի փառաւորուիլ իր «Պահպանիչ Որդեգրաց» տիտղոսով:

Բայց ներկայ պարագաներէս դուրս, մենք արդէն ուրիշ պատճառ ունէինք այս եւ ասոնց նման, Աստուածածնի ի պատիւ գրուած կամ մեր նախնեաց ձեռքով թարգ-

(1) Նարեկ, ԽԹ, Բ:

մանուած ուրիշ ճառեր՝ հրատարակելու։
Հ. Ղ. Ալիշան եւ իրեն պէս բազմաբախտ
մեր վարդապետներէն, տեսակ մը կտակ⁽²⁾
էր մեզի թողուած՝ զանոնք ի լոյս ընծա-
յելու։ ոչ միայն անոնց գեղեցկութեան ու
պերճախօսութեան դադարի մը տուած
ըլլալու, ոչ միայն անոնց վեհ եւ ուղիղ
վարդապետութեամբ լուսաւորած ըլլալու,
այլ յաճախ նաեւ անոնց ընտիր հայկաբա-
նութեամբ մեր հայրերու լեզուին թաղուն
գանձերուն ծանօթանալու, եւ անոր կերպ
կերպ դարձուածներուն ընտանեակու, եւ
զայն աւելի սիրելու, մշակելու եւ անոր
մէջ լաւ դարձանալ ու հմտանալու համար։

Եւ որպէս զի այս ճառերը ամսաթերթիս
էջերուն մէջ ցրուած չմնան, միանգամայն
մեր պատկառելի Նահապետին փափաքը
կրկնակի յարգած ըլլալու մտքով, զանոնք
պիտի ամփոփենք «Հայկական Սովերբ»-
ներուն կարգը, որով անոնց շարքն ալ կեն-
դանացած կ'ըլլայ։

Մեր ծրագրին տրամաբանական ուղղու-
թիւն մ'ուղեւոր տալ, նախ կը սկսինք հրա-
տարակել Սուրբ Կուսի Ծննդեան

ՆԵՐՔՈՂԱՆՆԵՐԸ. — Անոնց հեղինակին
է Գրիգոր է Կաթողիկոս Անաւարդեցի (1294
— 1307), զոր այժմ, պատմութեան ճրագը

ձեռքերնիս, մատչինք ճանչնալ իրեւ պաշ-
տօնական Մարգ եւ իբր Հեղինակ։

Սա, կը կոչուի նաեւ «Տուրքերիցանց»,
«Երգեցող»՝ դրած եկեղեցական երգերուն
համար, «Սեցի»՝ հայրապետական աթո-
ռը Սիւ փոխադրելուն, քանի որ Եղիպտոս-
սի Մէլիք-էլ-Աշրաֆ սուլթանը 1293 ին
Հոռմկլան կործանած էր։ Բայց իրեն յատ-
կացած է «Անաւարդեցի» մակդիրը, նոյն
Անաւարդա կամ Անաւարդայէն ըլլալուն։
Յակոբ Ա. (1268—1287) «Գիտնական» կա-
թողիկոսի քրոջ որդին էր, եւ անոր յա-
ջորդած էր Մեծքար⁽³⁾ կամ Մեծ այր ուխ-
տին առաջնորդութեան մէջ. եւ որովհետեւ
առանձին թեմ էր այն վանքը, ուստի նոյն
վիճակի արքեպիսկոպոսական աթոռը բար-
ձրացած էր։

Իր մօրեղբոր յիշատակը պատուելու
իր դիտունի համբաւը, եւ իր մէջ՝ նշա-
նաւոր Յակոբ Ա. կաթողիկոսի զգոնամիտ
վարչութիւնը վերակենդանացած տեսնելու
յոյսով՝ Լեւոն Բ թագաւորը⁽⁴⁾ ժողովա-
կան Հարց առաջարկած էր որ զինքն ըն-
տրեն։ Բայց անոնք զայն որակելով «Հո-
ռոմ» եւ «այր պարզամիտ»՝ յանձն չէին
առած։ Մերժուած էր նոյնպէս Ստեփան-
նոս վարդապետ Սիւնեաց իշխանի որդին՝
բրբ խորխոս մարգ։ Ընտրուեցաւ Կոստան-

կերտ վանքին մէջ թաղեցին։ Հմմ. Սիսուան, էջ՝
196։

(4) Այս տեղեկութիւնները կ'առնենք Հ.
Միք. Չամչ. հտ. Գ, էջ՝ 283—84, 286, 289։ Օր-
մանեան (Աղղաւտ. թիւ 1168) կը պնդէ թէ Լեւոն
Անաւարդեցուն ընտրութիւնը չէ պաշտպանած։
Բ հաստատութիւն, մէջ կը բերէ Որբեւանի խօս-
քը թէ ինչպէս «Կարմիր լերին» վանականները
«զականջա խիտ առ խիտ տաղակացուցին»։ Այս
վկայութիւնը, մենք կը կարծենք թէ իրեն դէմ
է։ Որովհետեւ այդ վանականները եթէ հարկ զգա-
ցին կարեւոր անձանց (թագաւորին) ակաճները
գիւցէ Գրիգորն ըլլար։ Թագաւորին ակաճներն է
որ կը խլացնեն, ուրեմն ըսել է թէ իրենց կաս-
որ կը խլացնեն, ուրեմն ըսել է որ Լեւոնի
զածն արքայէն էր. ուրեմն ըսել է որ Լեւոնի
կողմանէ Անաւարդեցուն ի նպատակ շարժում մը
տեսնէին եւ ուղեցին ամէն զնով զայն խափա-
նել։ Հետեւաբար Օրբեւանի խօսքն աւելի Չամ-
չեանին ըսածը կը հաստատէ՝ քան Օրմանեանինը։

զին Բ (1287—1290) Կեսարիոյ արքեպիսկո-
պոսը, որ կը կոչուի նաեւ Կատուկեցի,
Սեցի, Կեսարացի եւ Պրոնապործ (Չամչ.
Գ, 284), իր ծննդեան, անդեան, իր թե-
մին եւ իր՝ կամ իւր հօրը երբեմնի արհես-
տին համար։

Բայց ոմանք Հեթում Բ (1289—1308)
նորընտիր արքայի բարութեամբ զեղծանե-
լով՝ կրօնական խնդիրներ յուզեցին, ո-
րոնց պատճառաւ աղղին մէջ ծանր խռո-
վութիւններ ծագեցան, մինչեւ թագաւորն
ու հայրապետն իսկ իրարու դժտեցան, եւ
կաթողիկոսը դահլնկէց եղաւ ու տարա-
գրուեցաւ (1289—1290)։ Իրեն տեղ ըն-
տրուեցաւ Ստեփաննոս Գ (1290—1294)
Հոռմկլացին՝ Ե կեղեցաւ դաւառէն, որ
1293ին Մէլիք-էլ-Աշրաֆ սուլթանէն գերի
վարուելով՝ 1294ին Եղիպտոսի մէջ պան-
դուխտ կը մեռնէր։

Ասոր ահա վերջապէս յաջորդեց՝ Գր.
Անաւարդեցին, որ լաւ համբաւ կը վայելէր
արքունեաց մէջ, իշխանաց քով եւ կիլի-
կեցի եկեղեցական բարձր շրջանակներուն
մէջ։ Սոյն մաշտոցը, գրուած 1345ին,
(Թղ. 405բ, սիւն՝ 2), զինքը կը կոչէ
«տիեզերական վարդապետ»։ Իր քեռուին՝
Յակոբ Ա.ի ձեռքին տակ մեծցած, դիտ-
ցած էր նա աճիլ ու զարգանալ իբր ընտիր
վարդապետ եւ իբր դիտնական։ Ծանօթ էր
նա յոյն, լատին եւ ասորի լեզուներուն.
էր միանգամայն առաքինի, սրբակեց,
հոգեսէր եւ եկեղեցական բարեգար-
դութեանց նախանձախնդիր։ Իր արտաքի-
նովն ալ եւ ընդհանուր կենցաղադիտու-
թեամբ, ընկերական կեանքին մէջ՝ ներկա-
յանալի մարդ, աւելի ազնիւ եւ մարդա-
մօտի, շատ համակրելի եւ զրաւիչ նկարա-
գրով մէկը եղած ըլլալ կը թուի։

Չամչեան⁽⁵⁾, «հեղ էր, կ'ըսէ, բնու-
թեամբ եւ քաղցրաբարոյ, դիւրահաւան եւ

բարեմիտ»։ Հ. Ղ. Ալիշան զինքը կը կո-
չէ⁽⁶⁾ «արժանաւորն մեծի վարկի եւ պատ-
ուոյ, եւ կարգելոյ վերջին ի հարս եկե-
ղեցւոյս Հայոց»։ Դեռ արքեպիսկոպոս ե-
ղած ատեն, Յովհ. Երզնկացին Մեծքար
եկեղեցւոյն մէջ, անոր ներկայութեան խօ-
սած ատենաբանութեան մը միջոցին՝ այս-
պէս կ'արտայայտուի։

«Ի դուարթ եւ հրեշտակատիպ դիմացդ
տեսութենէ, ի քաղցր եւ ախորժական բա-
նիցդ արդիւնականէ, յամենայն եւ ի յոգ-
նափայլ ծաղկանցդ առաքինութեանն՝ որ
ի հոգւոյդ քո բուրաստանէ, յիմաստախոհ
յարակցաց եղբարց եւ որդւոց հոգեւորաց
ի քոյդ գմայլելոց վարժական հանճարա-
սիրութենէ»։ ուր ապագայ կաթողիկոսի
հոգւոյ եւ մտքի, իր արտաքին ու ներքին
կատարելութիւնները ճարտար թռիչքով
ակնարկուած են։

Ստեփ. Որբեւան (Բ, 193) «էր, կ'ըսէ,
այր դիտնական եւ առաքինի, սիրող եկե-
ղեցւոյ, տօնասէր եւ տօնախմբիչ տօնից
տէրունականաց, եւ պայծառացուցիչ յի-
շատակաց մարտիրոսաց»։

Ահա ուրեմն թէ ինչ համարմունք ու-
նէին վրան՝ հայրապետական աթոռը դեռ
չբարձրացած։

Օչին իշխանը, Կանչոյ ամրոցին հրամա-
նատարը, ընտրութիւնը լսելուն՝ ոտանա-
ւոր դրութեամբ⁽⁷⁾ իր շնորհաւորութիւն-
ները մատուց, գեղեցիկ մատանի մը նուի-
րելով։ Ի միջի այլոց՝ զինքն այսպէս կը
գրուատէ։

«Այսպիսի հռչակաւորանչ
աստուածազգեաց հայրապետիդ
«Սրբոյ Լուսաւորչին
պատշաճաւոր երէց որդիդ,
«Նախ ըզգործն առբերելով՝
ապա զանուն հայրապետիդ»։

(2) «Բագմավէպ», 1909, էջ՝ 195, ծնթ. 2։

(3) Այս քաղաքը զոր լատին վկայագիրը
յոյնէն առնելով կը կոչէ «in monte in petra
concava», քրիստոնէութեան առաջին դարերէն՝
պաշտամունքի վայր եղած կը թուի. որովհետեւ,
ճարագոս, Պորոս եւ Անդրոնիկոս սուրբերը,
304ին նահատակուելէն վերջ՝ այդ քաղաքին մէջ
գրուած են. որով նոյն ժամանակէն իբր սրբա-
վայր եւ ուխտատեղի պէտք է եղած ըլլայ։ Իսկ
հայկական վանքը հոն չի ելլու տուողը, եղած է
«օտարախորթն երեւեալ ի բարեպաշտութենէ քան
զամենայն իշխանս մեր յերկրին (Կիլիկիոյ)
գեպհին Միշ», Ստեփանէ իշխանի եւ թորոս Բ
հայոց Պարոնին կրտսեր եղբայրը (1169—1174),
որ իբր դաւաճան, չարաբարոյ եւ անկարագիր՝
պատմութեան առջեւ տիրահոգակ մնացած է, եւ
ըստ Հ. Սահակ Տէր Մովս. հտ. Բ, էջ 466,
ըրջակայ ժողովուրդներու կողմանէ «աշխարհիս
չարագոյն» մարդու տիպոսը ժառանգած։ Երբ
սպաննուեցաւ, անարժանաբար, զինքը նոյն իւրա-

(5) Հ. Միք. Չամչ. Գ, էջ 290։

(6) Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 241։

(7) Տպ. Բզմվ. 1852, էջ 184։ Հմմ. Հ. Միք.
Չամչ. Գ, էջ՝ 289. Հ. Ղ. Ալիշան Սիսուան. 241։

այս դատը՝ պատմութեան անկողմնակալ վճիռներուն եւ Ամենարարին Աստուծոյ եւ ազգիս անցեալ, ներկայ եւ ապագայ սերունդներու անյիշատի ներողամտութեան

քահանայն՝ նախորդ էջ՝ 423, տող 14-15ի մէջ եւս կ'ըսէ. «Ձեռք (1294) ի նոյնս Հեթում զՊրն. Թորոս նստոյց Թաղաւոր եւ ինքն միակեց եղաւ»: Արդ Թորոսի Թաղաւոր եղած ըլլալը պատմութիւնը կ'անգիտանայ. ուստի զըշին խօսքը տարբեր իմաստով առնելու է: Այդ սխալը կարելի է ուղղել հնագոյն եւ դէպքերուն աւելի մօտ եւ ընտանի ձեռագրէ մը, Օշին Թաղաւորի ժամագրքէն գրուած ԶԿԸ (1319) որ աւելի որոշ կերպով (տպ. էջ՝ 100, սիւն 2), կը գրէ. «Հեթում Թաղաւոր Հայոց ետ զպարոնութիւնն ի յիւր աղբայրն ի Պրն Թորոս եւ ինքը կրօնաւորեցաւ»: Եւ (տպ. էջ՝ 101, սիւն 1). «Հեթում Թաղաւոր Հայոց եւ իւր եղբայրն Պրն Թորոս ետուն զպա-

յանձնելով, անցնինք զինքը նկատել իբրեւ մատենագիր:

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

(Շարունակելի)

րոնութիւնն ի Պր Սմբատ եւ ինքեանք գնացին ի Կ. Պոլիս»: Սմբատի տրուածն ուրեմն պարզապէս պարոնութիւն կամ առժամանակեայ տեղապահութիւն մ'էր եւ ոչ իսկական Թաղաւորութիւն. հետեւաբար, հայրապետը չէր կրնար զինքը Թաղաւոր օծել մինչ օրինաւոր Թաղաւորն ողջ էր: Եւ եթէ Հեթումի կողմէն արդէն Թաղաւոր կարգուած էր, անոր օտարութենէ դարձին՝ ինչո՞ւ կազմակերպուած դուռներով կանոնաւոր պատերազմով, զիմացը պիտի ելլէր զինքն ու իր հարազատը վտարելու կամ բռնել բանտել մեղացիներ: Ուստի, ըստ մեզ արդարանալու ո'չ մէկ յեռնակէտ ունի կաթուղիկոսը:

Ա.

ԳՐԻԳՈՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԱԽԱՐԱՅԵՑԻՈՅ

Ի ՆԱԽԱՏՈՆ

Ա. ԾՆՆԴԻԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ

Զուրբ ծնունդ երանուհոյն եւ ռաջապարաստելոյ՝ եւ նախատօ՛ղհաւտ օրհնելոյն միշտ Կուսին նի սուրբ Տիրուհոյն Ծնունդն ի Մարիամու, որ ի յամուլ եւ ի ձեռն այսմիկ: Երբեք իւրոց ծնողացն ծնաւ չընորհօքն սքանչելագործութեանն: Աստուծոյ. որով՝ աղբիւրացան եւ սկսան ամենայն տօնելիքն մեր՝ փրկագործական խորհուրդքն՝ Գրբիստոսի, եկայք այսօր՝ պատրաստեցուք զանձինս մեր եղբարք, որ եմք ժողովուրդք եւ նրնդենէն, որ ծնեալ եղեւ այսօր զինք արեան Միածնի նորա՝ արժանապէս տօնել. վարդապետեալք մէն Դաւթի եւ Յեսեայ, ասելի նմին ինքենէ՛ք ի կամացն Աստուծոյ, եթէ արժանաւոր է յա-

րեւ՝ զաւագանաւ՝⁹ նովաւ տկարութիւն հնութեան մերոյ յեցեալ կանգնեցաւ: Եւ ապա ի վերայ բերէ զտիրականն ի նմանէ ծընունդ, թէ՛ «Ելցէ ծաղիկ» ի նըմանէ:

Այլ եւ այժմ ի ձեռն հրեշտակի զնոյն զսորին սուրբ ծնունդ նախ եւ յառաջ աւետիս տայր. զի յառաջեալ հրեշտակք ցնծութեամբ Աննայի՝¹⁰ Յովակիմայ աւետիս բերկրութեան զսրբուհոյն ծննդդենէ մատուցանէին: Որք եւ նորքն իսկ ամենասուրբ զուարթունքն սովորաբար ցնծային ընդ նոյն

Համեմատեալ օրինակ մեր են ՕժՊՏ: Օ, Ժ = Աշնի քաղաւորի անաւարգեան Յայսմաւորք մատենադարանիս, քք. 710, 402: Պ = Պարիսեան տօնամակն մեծ քիւ՝ 46 կամ 88, որ է բնագիր հրատարակութեանս (ձառքնաթիւ մեր՝ ք. 742): Տ = Նորին Աշնին քաղաւորի Յայսմ. (ք. 710) տպ. ի 1834 ամին ի Կ. Պոլիս, եւ ըստ քմաց փոփոխեալ եւ յապաւեալ:

1 ՕժՏ, որով + եւ:
2 Օժ, խորհուրդն, Տ՝ խորհրդոցն:
3 ՕժՏ, չ, այսօր:

4 ՕժՏ, յինքենէ:
5 ՕժՏ, յառաջ պատրաստելոյ:
6 ՕժՏ, չ, նա ինքն:
7 ՕժՏ, չ, եւ:
8 ՕՏ, իբրեւ:
9 ՕժՏ, զաւագանաւ:
10 ՕժՏ, Աննայի + եւ:
11 ՕՏ, բերկրութիւն, Ժ՝ բերկրութեան:

բերկրութեամբ¹¹. որք¹² ըստ աւելոյն Գրիստոսի՝ նոյն երկնայինքն, վասն միոյ մեղուցելոյ փրկութեան՝ ամենեքեան ցնծան, քանի՛ առաւել ապա զիսկ պարտ է, եթէ տօնեն այսօր զսկիզբն փրկութեան ամենայն մերս բընութեան. այսինքն զծնունդ Երանուհոյն, որով լուծաւ մեղքն եւ անէծքն¹³:

Եւ եւս¹⁴ մանաւանդ հաւատամբ, եթէ տօնէ այսօր եւ ուրախանայ երկնաւոր Հայրն՝ ամենայն բարեկամօքն եւ առ դուրս հայելօք՝ հազարօք հազարացն, որք նորա առաջի կան եւ պաշտեն զնա ըստ Դանիէլի: Զի զպատկերն իւր եղծեալ յաղբոյ մեղացն, եւ զդրամբն արծաթոյ մաքուրս բնութեան՝ զոր խառնեցաք ի Ժանկն ապականէ նախամարն Եւայիւ, Թեանն ունէր զծառ, յորմէ եղեւ մահ ամենեցուն, քանի՛ ապա եւ այսօր պայծառ եւ յստակ կուսութեամբ եւ անապական նմանութեամբ արարչական բնութեանն՝ ըստ իւրոյ ինքեան նախապէս գրեալ տեսանէ ի ծնունդ ի կանայս Մարիամու: ոչ անհաս՝ այլ ի մէջ մարդկան

Որ եւ ելանէ անդէն յարգանդէ, ըստ Սողոմոնի, սպիտակացեալ յեցեալ յեղբորորդին իւր. այսօր ինքն՝ ընդ ծնանին իսկ զոլով քանի՛ առաւել ապա զիսկ պարտ է, եթէ տօնեն այսօր զսկիզբն փրկութեան ամենայն մերս բընութեան. այսինքն զծնունդ Երանուհոյն, որով լուծաւ մեղքն եւ անէծքն¹³:

Եւ եւս¹⁴ մանաւանդ հաւատամբ, եթէ տօնէ այսօր եւ ուրախանայ երկնաւոր Հայրն՝ ամենայն բարեկամօքն եւ առ դուրս հայելօք՝ հազարօք հազարացն, որք նորա առաջի կան եւ պաշտեն զնա ըստ Դանիէլի: Զի զպատկերն իւր եղծեալ յաղբոյ մեղացն, եւ զդրամբն արծաթոյ մաքուրս բնութեան՝ զոր խառնեցաք ի Ժանկն ապականէ նախամարն Եւայիւ, Թեանն ունէր զծառ, յորմէ եղեւ մահ ամենեցուն, քանի՛ ապա եւ այսօր պայծառ եւ յստակ կուսութեամբ եւ անապական նմանութեամբ արարչական բնութեանն՝ ըստ իւրոյ ինքեան նախապէս գրեալ տեսանէ ի ծնունդ ի կանայս Մարիամու: ոչ անհաս՝ այլ ի մէջ մարդկան

Որով¹⁵ ապա եթէ Աղամ նախահայրն մեր եւ մարդն առաջնապատիւ զտնկադործութիւն փափկութեան զբախտին տեսեալ զըւարճանայր, զայնմ՝ որ զգիտութեանն ունէր զծառ, յորմէ եղեւ մահ ամենեցուն, քանի՛ ապա եւ այսօր պայծառ եւ յստակ կուսութեամբ եւ անապական նմանութեամբ արարչական բնութեանն՝ ըստ իւրոյ ինքեան նախապէս գրեալ տեսանէ ի ծնունդ ի կանայս Մարիամու: ոչ անհաս՝ այլ ի մէջ մարդկան

եւ ի մերմէ բնութենէս, որ զամենեցուն կենարարն ունի զծառ եւ զարդարութեան պատուէն Գրիստոս: Որով ապա պատուեցուք զփափկութեանս այս դրախտ ի զրազմանց եւ ի ծանրաբեռնութեան փշաբեր երկրի եւ մեղաց, եւ ի հեղձուցող պատրանաց աշխարհիս հողոց՝ պարապումն առնելով մերոց մտացս լեղեմայ:

Եւ ընծայեցուք սրբոյն եւ կուսութեանն մօր զանձինս մեր սըրբութեամբ եւ երկիւղին Աստուծոյ, յղանալ եւ ծնանել զհոգի փրկութեան, խորհելով ասեմ եւ ցանկութեամբ՝ յղանալ զբարին իբրեւ նախատօն, եւ դործով աւարտելով զնոյն՝ ծնանել եւ լինել ճշմարիտ տօնեցեալ յԱստուծոյ եւ ի հրեշտակաց եւ ի վիպութեան մտաց մեր խղճի. ի փառս Գրիստոս Աստուծոյ մերոյ եւ ի պատիւ մօր նորա օրհնելոյն ի Հօրէ եւ բնակարանի Սուրբ Հոգւոյն յաւիտեանս:

12 Տ, զի եթէ, չ, որք:
13 ՕժՏ, անէծք:
14 ՕժՏ, չ, եւ եւս... իբրեւ

զստեղն խնդոյ ծխեալ. (տողք 12):

15 ՕժՏ՝ չ, Որով ապա Աղամ... սուրբ Հոգւոյն յաւիտեանս, (տողք՝ 17):

Բ

Սեպտեմբեր ուր՝ Ծնունդ է ամենասուրբ Տիրուհոյն մերոյ Մարիամու Աստուածածնին եւ միշտ Կուսին, որ ի Յովակիմայ եւ յԱննայի ի սուրբ ծնողաց իւրոց. ի Գրիգորէ՛ Կաթուղիկոսէ ասացեալ՝ Յաղագս Ծնունդեանս Աստուածածնին Մարիամու:

Զամենաշնորհ² եւ զճշմարիտ տօնելի օրս³ ծննդեան ծնողին Աստուծոյ, որ սկիզբն եղեւ եւ աղբիւր ամենայն եկեղեցական տօնութեան:

Նից, աստուածային Հոգին ի ձեռն Սողոմոնի զբուստէ. «Ժ պրտաւ արդարութեան, ասէ՛ք, բնութեան ծառ կենաց»։ Քանզի եթէ ծառ կենաց նոյն ինքն ամենասուրբ Աստուածածինն է, որ պրտաւ զարեբեաց կենաց պտուղ զԳրիստոս, որոյ Մարմինն՝ կեանք է պատճառ կենաց, որպէս ասաց՝ «Այս է հացն կենաց իջեալ յերկնից. զի որ ոք ուտիցէ ի սմանէ՝ կեցցէ յաւիտեանս»։ Եւ «որ ուտէ զմարմին իմ՝ կեցցէ վասն որ անսերմն ծնաւ զանձանն իւր

իմ, որպէս եւ ես կենդանի եմ վասն Հօրն»։ Եւ թէ «մի՛ մեղքի յաւիտեանս»։

Զի ծառ եւ պտուղ էր որ մեղ պատճառ մեղաց եւ մահու եղեւ, ի ծառ եւ ի պտուղ օրինակի պատճառն լուծման նզովիցն այնորիկ սուրբ ծնողն, եւ անախտաբար, որպէս պտուղ ծնեալն ի նմանէ՝ որոյ կերակրովն կենդանացաք եւ արդարացաք: Որ եւ առ Արքա՛համ օրինակեցաւ ի ծառն՝ որ անսերմն ծնաւ զանձանն իւր

2 Ժ՝ յամենաշնորհ:
3 ՕժՏ՝ աւետիս:

4 Օժ՝ ասեմ:

պտուղն՝ զգաւն, որ կենաց պատ-
ճառ պտուղ էր Իսահակայ: Որ-
պէս եւ սա առանց առն՝ ծնաւ՝
զԱստուած մարդացեալ, որ փո-
խանակ աշխարհի տուաւ յԱստու-
ծոյ ի մահ՝ եւ կեցոյց զմեզ:

Նոյնպէս եւ առ Ահարոնիւ երե-
ւեցաւ ծառ առանց արմատոյ եւ
խոնաւութեան, ծաղկեալ եւ
պտղաբերեալ զարքայականն ըն-
կոյ՞ գոլով զաւազան քահանա-
յական: Նոյն է եւ մորենի անկէզ:
Չոր եւ Դաւիթ յառաջ երանելով
զառ ի բոլոր ազգաց լեզուս զյե-
մոյ երանեալն, զնոյն Կոյս, ըզ-
միայն մարդն անարատ եւ աստ-
ուածապատկեր. որ ոչ ի խոր-
հուրդս կամ ի գործ կամ ի ժանդ
աթոռ մեղացն զնաց երբեք, կամ
եկաց կամ նստաւ: Չնոյնն ապա
ծառ կոչէ, որ թէպէտ՝ անժամ
ճաշակեալ պտղոյն նախնոյ՝ ըզ-
պտուղ իւր ի ժամու ետ, սակայն
տեբեւն ոչ թափեցաւ. այսինքն,
զի որպէս ծառ յորժամ տայ ըզ-
պտուղն իւր՝ յաշունն զկնի թո-
թափի տեբեւն, այնպէս՝ կին՝ ծը-
նանելով որդի՝ թառամի եւ լու-
ծանի կուսութիւնն:

Իսկ Տիրամայրն ծնեալ զՔրիստ-
ոսն անթափելի եւ անլուծանելի
պահեցաւ յաւիտեան կուսութեանն
անապականութիւն. զի «Փաղկեալ
մնաց դուռն ի մտանելն եւ յերա-
նելն Աստուծոյ Իսրայելի»:

Արդ եթէ ծառ կենաց ըստ այսմ
ամենայնի՞ս պատճառն է բոլորից
կենդանութեան երանելի Աստուա-
ծածինն, ապա «Ի զնացս ջուրց
տնկիւն» ըստ Դաւթի, եւ «Ի
պտղոյ արդարութեան բուսանի-
լըն» ըստ Սողոմոնի, սուրբ ծը-
նունդն՝ նորա է. որ այսօր ծնեալ՝
տնկեցաւ յաշխարհի, զիւրահուպ
եւ ի մէջ մարդկան, եւ ոչ սրով-

բէիւք փաղկեալ բոցեղէն սրով:
Եւ յերանա ամենայն նախահարցն
նոցա, որ վտակօք ջուրց օրինացն
էին առգեալք՝¹⁰ եւ ծնաւ այսօր
Հոգւոյն շնորհաց վտակօք, եւ
մարգարէական ամպոցն եւ վտա-
կացն նախաձայնութեամբ՝ զբոլոր
արդարոցն նահապետացն եւ մար-
գարէիցն արդարագործութեանն
պտղոյ զորոյն սուրբ եւ զփոխա-
րէնն աշխարհի: Չի ասելն, թէ «Ի
զՏիրամայրն սուրբ» ի յիւրեանց
պտղոյ արդարութեան բուսանի
զաւակացն ծնանել: Եւ այս խոր-
հուրդն արդարութեանն ծառայ-
մանելով՝ զմանն իւր ծառ բու-
սուցանէ, այսպէս՝¹¹ առաջինն նա-
հապետացն եւ արդարոցն, որք
յԱրեւել, յենովսայ, ի Նոյէ, յԱր-
աքայէ, ի Յովսայ եւ ի Մով-
սէսէ, ի Դաւթէ եւ յամենայն նա-
խահարցն եւ մարգարէից գործք
առաքինութեան եւ հաւատոց
պտուղ իւր ի ժամու ետ, սակայն
տեբեւն ոչ թափեցաւ. այսինքն,
զի որպէս ծառ յորժամ տայ ըզ-
պտուղն իւր՝ յաշունն զկնի թո-
թափի տեբեւն, այնպէս՝ կին՝ ծը-
նանելով որդի՝ թառամի եւ լու-
ծանի կուսութիւնն:

Իսկ Տիրամայրն ծնեալ զՔրիստ-
ոսն անթափելի եւ անլուծանելի
պահեցաւ յաւիտեան կուսութեանն
անապականութիւն. զի «Փաղկեալ
մնաց դուռն ի մտանելն եւ յերա-
նելն Աստուծոյ Իսրայելի»:

Արդ եթէ ծառ կենաց ըստ այսմ
ամենայնի՞ս պատճառն է բոլորից
կենդանութեան երանելի Աստուա-
ծածինն, ապա «Ի զնացս ջուրց
տնկիւն» ըստ Դաւթի, եւ «Ի
պտղոյ արդարութեան բուսանի-
լըն» ըստ Սողոմոնի, սուրբ ծը-
նունդն՝ նորա է. որ այսօր ծնեալ՝
տնկեցաւ յաշխարհի, զիւրահուպ
եւ ի մէջ մարդկան, եւ ոչ սրով-

- | | | |
|---------------------------|---------------------------|----------------------------|
| 5 ՕժՏ՝ ծնաւ + զաննմանն | 10 Պ՝ առաքեալք: | 17 ՕժՏ՝ երանօք: |
| իւր: | 11 ՕժՏ՝ այսպէս + ամենայն: | 18 Տ՝ չ. ահա: |
| 6 ՕՏ՝ զնոյն. ՕժՏ՝ թէպէտ + | 12 ՕժՏ՝ պտղաբերութեան: | 19 Տ՝ ասէ: |
| ընդդէմ: | 13 ՕժՏ՝ կնոջէն: | 20 Պ՝ կշիռ: |
| 7 ՕժՏ՝ այսպէս: | 14 Տ՝ աս էր: | 21 ՕժՏ՝ չ. «եւ զընդ յերկար |
| 8 Պ՝ ամենայն: | 15 ՕժՏ՝ օրհնեալ: | աշխատութեանն զփոխարէնն եւ |
| 9 ՕժՏ՝ Ծնունդ: | 16 ՕՏ՝ ազրեք. Տ՝ աղբիւրն: | զպտուղ»: |

զարէից հոգիքն ցնծան այսօր. զի
զարգարութեանն իւրեանց եւ զա-
ռաքինութեանն քրտանց զփոխա-
րէնն հասուցումն շնորհի՝ ընկա-
լան յԱստուծոյ զծնունդն օրհնեալ
եւ յուսացեալ զաւակին, որ զՈր-
դին Աստուծոյ ծնանելոց էր եւ
զաշխարհ՝²² ամենայն փրկելոց:

Մանաւանդ առաւելապէս, ցնծայ
այսօր նոյն ինքն ամենեցուն ա-
բարիչն Աստուած Հայր՝ Որդւով
եւ Հոգւով. զի թէ ամենայն
մարդ զկանուխ սկսեալ գործն իւր
աւարտէ եւ ի զլուսն հանէ՝ հանկ-
չի եւ ուրախանայ, որպէս՝²³ թէ
տուն ոք սկսանիցի շինել կամ
քաղաք ինչ, յորժամ կատարէ ըզ-
գործն զոր կեալն էր յառաջ,
խնդութեամբ նաւակատիւն²⁴ առնէ
ամենայն բարեկամօքն իւրօք²⁵:

Յորոյ օրինակ ի կատարելն զվը-
կայութեան խորանն՝ զտիպն Մա-
րիամու, մեծազոյն նաւակատիւ
առնել հրամայէր Աստուած Մով-
սէսի եւ Ժողովրդեանն. եւ ամե-
նայն իշխանք ցեղիցն՝ ընծարեք
լինէին կատարման եւ նաւակա-
տեաց խորանին, որ զճարտիտ
Աստուծոյ տաճարս տպացուցա-
նէր ինքեամբ եւ ամենայն իւրա-
յօքն: Մանի՛ր ապա աստի թէ ո՛ր-
չափ ուրախութիւն է այսօր Աս-
տուծոյ, զնախ եւ զկանուխ ըս-
կուցեալն իւր գործ ի զլուսն հա-
նելովս²⁶, այսինքն՝ զծնունդ Մա-
րիամու Տիրամօր. զոր հաւատամբ
կանուխ ընտրեալ²⁷ եւ հիմնա-
դրեալ²⁷ Աստուծոյ եւ յառաջ նը-
կատեալ²⁷:

Չի եթէ Երեմիաս յառաջ քան
զծնանիւն՝ ընտրեալ մաքրեցաւ եւ
ծանուցաւ, եւ առաքեալքն՝ ոչ
միայն քան զծնունդն, այլ եւ քան
զլինելն աշխարհի յառաջ ընտրե-
ցան, ծանի՛ր թէ ապա՝ քանի՛ ա-

ռաւել սա, որ ամենայն մարդա-
րէիցն ընտրութեանն էր պատճառ
եւ բոլոր առաքելական զնդին նա-
խակոչ լինելոյն՝ կատարումն.
որով եւ նախ քան զամենայն²⁸ եւ
յառաջ քան զբոլորսն ընտրեցաւ
եւ կանուխ առ ի յԱստուծոյ նա-
խառն խորհուրդն²⁹ սկսեալ եղեւ
եւ հիմնացեալ. զոր եւ շինէր ըզ-
սոյն առ ամենայն նահապետօքն
եւ մարգարէիւքն ի դարս առա-
ջինս, ի բանս եւ յօրինակս նա-
խադուշակս: Ապա զի այս որ ա-
մենայնիւն³⁰ այնորիկ աւարտ էր
կատարումն ի կատարումն եկն
այսօր, եւ ծնաւ ամենայն ճար-
տուրութեանն Աստուծոյ լրումն եւ
զարգեք ինչ, յորժամ կատարէ ըզ-
գործն զոր կեալն էր յառաջ,
խնդութեամբ նաւակատիւն²⁴ առնէ
ամենայն բարեկամօքն իւրօք²⁵:

Չի թէ վասն Յովհաննու ասէր
հրեշտակն ցՊաղարիս³¹, եթէ՝
«Բաղարիս ի ծննդեան նորա խըն-
դացեալ», ո՛րչափ ապա զՏիրամօ-
րն Յովհաննու եւ զամենեցուն
զերկնաւոր թաղուհոյս եւ զհա-
նուր աշխարհի զերկիւր³² եւ զերկ-
նից զշխոյիս ծննդեան պարտ է
կարծել, եթէ՝ բոլորից է պատ-
ճառ խնդութեան:

Որով ապա ցնծացուք հաւա-
տացեալք ի ծնունդ սորա՝ որ
Մայր է ամենայն քրիստոնէից եւ
ծնող բոլոր լրման կաթողիկէ ն-
կեղեցոյ: Չի սկիզբն գոլով ան-
ախտ ծննդեան աւագանին որ ի
շրջոյ եւ ի Հոգւոյ, որ համեմատի
ծննդեան Որդւոյն Աստուծոյ որ ի
կուսէն եւ ի սուրբ Հոգւոյն: Չի
որպէս կուսին անհնար էր ծնա-
նել մանուկ՝ առանց առն, եւ ծը-
նուրեաց, զոր զպտուց, զոր համարձակ համ-
տոսի փախուստն չուեաց. յորում
կատարելն աճամար հասակի՝ ցըն-
ծայր. որ նմա, որպէս որդի մօր՝

- | | | |
|--|----------------------------|----------------------------|
| 22 ՕժՏ՝ զաշխարհս: | 27 ՕժՏ՝ ընտրել. հիմնադրել. | 33 Տ՝ չ. ահա: |
| 23 ՕժՏ՝ չունի զ2 տողան «Որ-
պէս թէ տուն... խնդութեամբ»: | 28 ՕՏ՝ զամենայն: | 34 ՕժՏ՝ եթէ: |
| 24 ՕժՏ՝ այլ եւ նաւակատիւս, | 29 ՕժՏ՝ խորհուրդան: | 35 Տ՝ մայր: |
| Տ + եւս: | 30 Տ՝ ամենայնի: | 36 ՕժՏ՝ էր: |
| 25 Օժ՝ իւրովք: | 31 Օ՝ Չաղարիս, չ. ց: Տ՝ | 37 Պ՝ (որ է մերս լի ճառըն- |
| 26 Տ՝ հանելովն: | Չաղարիս: Տ՝ առ Չաղարիս: | տիր) չ. «ծնողական վստահու- |
| | 32 Պ՝ զերկնի: | թեամբ մատչելով»: |

հնազանդութեամբ հպատակեաց. կրնդրութեամբ՝ զազաչանսն որ վասն մաքուր զգաստութեանն որ զինքն որպէս ճշմարիտ ծնող՝ վասն մօրն ազգակցացս եւ իւրոյ պայծառութեան. ըստ Սողոմոնի ըստ իւրոյ եղեալ օրինացն պա- անուանեալ եղբարցս՝ լսէ: Որով զնոյն Տիրամայրն զըրուտեալով տուեաց: Որ եւ ի խաչին՝ ի ժամ ապա որպէս առ Միածին Բանն՝ կոչելոյ՝ «Ծուշան, ասէ, հովտաց աւանդելոյ հողւոյն, զամենայն զնոյն ինքն զկուսութեամբ ծնող եւ ծաղիկ դաշտաց»:

Գաւազարանացն անտես արա- Տիրամայրն, եւ զառ ի նմանէ ծը- րեալ, զնորա ողորմելի կիրան նանիլն լուսիմք բարեխօս:

մայրական աղետին տեսնելով՝ Այսպէս եւ առ նոյն ճշմարիտ խանդաղատանք շարժեցաւ, եւ ծնողն Աստուծոյ Բանին՝ զնորին զնա՝ քան զմահուն չափ ի վեր երանելի³⁸ ծնողսն, եւ զայսօր ի հողալով՝ աշակերտին յանձն ա- նոցանէ ծնանիլն առցուք օժան- րար:

Որով ապա սա առ նա անդա- զաւի³⁹. զերանելիսն ասեմ՝ զՅովա- զար, զհաւատացելոց՝ իրբեւ ըղ- կիմ եւ զԱննա, զորս այսմ ծաղ- կըրսեք որդւոց՝ բարեխօսէ, եւ կի՝ որ զՔրիստոս մեզ պողարե- լեաց, զաշտս՝ ի մարգարէութե- անէն լուսաբ⁴⁰: Եւ այս անթառամ նէն լուսաբ⁴⁰: Եւ այս անթառամ զնա՝ ամա, չուշանիս՝ հովիտս ընծիւղիչ այս- մեզ արգահատէ. եւ նա՝ սմա, օր զիտացաք: Դաշտ՝ վասն հող- զոր եւ ինքն յօժարութեամբ կա- օր զիտացաք: Դաշտ՝ վասն հող- մի, որպէս մօր՝ սովորական ուն- ւոցն խոնարհութեան, եւ չուշան՝

նորին, ըստ անվաւեր Նախաւե- րանի Տեառնեղբօրն կոչեցե- րով: ազատ իմն խմբազրութեամբ, զոր յոյս ունիմ ընդ հուպ ընծայել ընթերցողաց:

նորին, ըստ անվաւեր Նախաւե- րանի Տեառնեղբօրն կոչեցե- րով: ազատ իմն խմբազրութեամբ, զոր յոյս ունիմ ընդ հուպ ընծայել ընթերցողաց:

- 38 ՕժՏ՝ զերանելի:
- 39 ՕժՏ՝ օժնդակ:
- 40 ՕժՏ՝ առլուսաբ:
- 41 ՕժՏ՝ մարգար. զուսմարք:

- 42 ՕժՏ՝ առաք. զուսմարք, չ. ժո- զովք:
- * Յարի ի սոյն պատմութիւն Յննդեան Մարիամու եւ ծնողաց

ԴԱՐՁԵԱԼ ԹՈՐՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ

(1284-1346)

Հ. Ն. Ակինեան «Հանդէս Ամսօրեայ»ի 1947 Յունուար թիւին մէջ առիթ առնելով իմ ԹՈՐՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ հատորիկս (1943, Նիւ Եորք) կը հրա- տարակէ ուսումնասիրութիւն մը «Թորոս Մշեցի Տաղասաց», ուր կ'ընէ կարգ մը «եզրակացութիւն- ներ» յայտնելով որ «համաժողով» չէ իմ «եզրակա- ցութեանց»:

Հ. Ակինեանի գրութիւնը առիթ կու տայ որ աւելի ընդլայնեմ քանի մը զիտողութիւններն որ ըրած էի: Ասկէ գատ հետաքրքիրներուն տրամա- զրելով նորագիտ նիւթեր, որոնք այդ գործիս հրատարակութենէն վերջ ինծի մատչելի եղան, ա- սոնցմէ մին նոյնիսկ Հ. Ակինեանի վերոյիշեալ գրութեան կը պարտինք:

Ըստ յարգելի Հօր՝ յիշատակարանները որ մենք տուած էինք մեր գրքոյի մէջ՝ «ոչ մէկ Տարօ- նեցի Թորոս գրիչ-նկարիչի կը վերաբերին» (էջ

50): Ըստ իրեն ատոնք բաժնելու ենք երեք տար- րեք Տարօնեցի Թորոս նկարիչ-գրիչներու:

Ասոնցմէ առաջինը ըստ գիտնական Հօր «Թորոս Տարօնեցի գրիչ ի Դրագարի» է: Ես իմ աշխա- տութեանս մէջ ըսած էի. «Դժբախտաբար ինծի անձանթ կը մնայ 1290-էն յիշատակութիւն Թո- րոս Տարօնեցիի Դրագարի գտնուելուն մասին»:

Գուցէ Հ. Ակինեանի ծանօթ է, սակայն կրնայ ըլլալ որ իր Դրագարիի Թորոսը ըլլայ նոյն այն Թորոսը որ 1299-ին դեռ գրչութեամբ կը զբաղէ ի Դրագարի, ուր կը գրէր Սաղէմի 24 թ. Աւե- տարանը: Գուցէ այս Թորոսը Տարօնեցիի հետ նոյնացնելու տեղ նոյնացնելու ենք Թորոս Թա- փրոնցիի կամ Հոռոմկայեցիի հետ» (էջ 18-19):

Հ. Ակինեան իր ներկայ գրութեամբ կու գալ հաստատելու որ Դրագարի էր Թորոս Տարօնեցիի եւ այլուստ մեզի անմատչելի յիշատակարան մը

առնուած Գեղամ Տէր-Կարապետեանի «Ձեռագիրք Տարօնոյ» հաւանաբար անտիպ գործէն, որ կ'ի- րեւայ թէ կը մնայ Հ. Ակինեանի մօտ, կը հրա- տարակուի իրմէ առաջին անգամ: Այս յիշատա- կարանը որմէ քիչ յետոյ դարձեալ պիտի օգ- տուինք, կ'արտատպեմ առնելով Հ. Ակինեանի հրատարակութենէն: Հ. Ակինեան դժբախտաբար յիշատակարանը ամբողջութեամբ չէ հրատարա- կած:

«...գալատմութիւնս ծերունիի հօր իմոյ գիայրե- նի գաւառէն Ծատալս կոչեցելոյ եւ զՏարօնոյ... ի վաղուց հետէ ցանկայի տեսանիլ գտուրք ուխտն եւ գիայրեմի գաւառն իմ. եւ մինչեւ ցայս վայր ըզգայի՝ աչօք ոչ տեսի այլ մտօք յամենայն ժամ ... եւ ես իմֆնիմ ձեռքօք իմով գրեցի գցանկալի Աւետարանս եւ յարգար ընչից իմոց ետու գաւ (նկարագրող) ոսկեծաղիօք, ոսկի զլիսագրովք, հաւքարքառօք եւ չորեսն խորանօք եւ բազմե- րանգ գունով. կազմօք եւ արծաթի կոնալօք յար- մարեցի ըստ իմ փանափի եւ քարամատար կարի եւ ետու գաւ ընծայ Ս. Յովհաննու կարապետի որ է ի գաւառն Տարօնոյ»: (Հ. Ա. էջ 50):

Դիտելի է որ յիշատակարանի այս մասին մէջ Թորոս Տարօնեցիի անունը յիշուած չէ: Ուրեմն Հ. Ակինեան յիշատակարանին մնացեալ մասին մէջ հանդիպած ըլլալու է գրչին «Թորոս Տարօ- նեցի» ձեւին: Յիշատակարանին մէջ կան ուրիշ գիտելի կէտեր՝ որոնց մասին իրենց կարգին:

Յարգելի Հայրը կ'աւելցնէ. «Այս Թորոսէն է առանց տարակոյսի՝ վեմնտիկի Միսիքաբեանց Թ. 5 Աստուածաշունչը, որուն գրիչն է Թորոս Բա- հանայ աշակերտ Թորոսի (Հոռոմկայեցոյ), ուս- տի գրուած 1290-էն ոչ շատ յառաջ» (էջ 50): Սակայն Հ. Ակինեանի հաւատարման հակասակ «տարակուսելի» է այս Թորոսին «Տարօնեցին» ըլ- լալը: Նախ ձեռագիրքը թուական չունի, յետոյ տեղը չէ նշանակուած: Գրիչ Թորոսը ո՛չ մէկ տեղ կ'անհարկէ Տարօնեցի ըլլալուն, բան մը որ սովորական է իրեն համար:

Հ. Ակինեան «հաւանութեն»ով մը եւ «թերեւս»ով մը կ'ուզէ Թորոս Տարօնեցիի նկատել նաեւ էջմ. Թ. 2588ի «սակաւ նորոգողն» եւ Նոր Զուղայի վանքին թիւ 202 Աւետարանին գրիչը: Ասոնք միայն Թորոս անունն անձնութեանէն աւելի ապա-

ցոյց մը չունին Տարօնեցիին հետ նոյնանալու. եւ աւելորդ կը սեպեմ երկարել:

Գիտնական Հայրը իբր երկրորդ Թորոս Տարօ- նեցի մը կը նկատէ «Թորոս որդի Սարգսի եւ Մարիամի, գրիչ եւ նկարիչ» (էջ 51): Այս Թո- րոսին կ'ընծայէ Վենետիկի թիւ 193 Նոր Կտա- կարանը (1284էն), Բաղէշի Աստուածաշունչը (1328էն), Բաղէշի Աւետարանը (1330էն), Սաղէմի թիւ 95 ձաշոյցը (1331էն), Վենետիկի թիւ 12 Աստուածաշունչը (1332էն) եւ Հալէպի թիւ 110 Աւետարանը (անթուական)(1):

Հուսկ իբր երրորդ «Թորոս Տարօնեցի, գրիչ եւ նկարիչ ի Դաւթոյ» կը նկատէ Թորոս մը «որ տակաւին սարկաւազ 1311ին ծաղկած է Թաւրիզի Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցոյ Թ. 1 Աւետարանը (Աճառեան, Յուլիան, էջ 70-72), ո- րուն գրիչն էր Ծեր, տեղը անձանթ» (էջ 51):

Խօսած եմ իմ ԹՈՐՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ հատորիկիս մէջ այս Թորոս Սարկաւազ ծաղկողին մասին (էջ 3, լուսանցքին տակ): Այլուր ալ՝ օրաթերթի մէջ՝ Խօսած եմ այս ձեռագրին Թաւրիզի յիշեալ եկե- ղեցիէն «հեռացուելով» արտասահման թերթ առ թերթ ծախուելուն մասին: Մանրանկարներէն հատ մը (Ղուկաս) եւ Մարկոսի սկիզբը իր խորանով այժմ իմ հաւաքմանս մէջ է: Մատթէոսի ման- րանկարը կը գտնուի հաւաքման մէջ Robert -Garrettի Princeton University, որուն մասին նը- կարագրող աշխատութիւն մը հրատարակեցի անդ- լիւրէն The Princeton University Library Chronicle, 1943, Յունիս. էջ 109-12: Իսկ անօ- րինական մանրանկարներու չորս հատը, երկու թերթ, այժմ կը գտնուի Պրն. Յարութիւն Հա- զարեանի մօտ ի Նիւ Եորք: Ձեռագրին միւս մա- սերը եւ արծաթ կազմը ցարդ կը մնան անձանթ տեղ մը:

Դատելով մանրանկարներէն Թորոս «սարկաւա- ղ»ը չէ կարելի նոյնացնել Թորոս Տարօնեցիին հետ: Թորոս Տարօնեցի ոչ 1311էն առաջ եւ ոչ ալ վերջ երբեք «սարկաւազ» կամ եկեղեցական ո՛րեւէ ուրիշ աստիճան չէ ունեցած կամ այդպէս յիշուած

(1) Հալէպի թիւ 110 «Աւետարան» չէ, ինչպէս որ սխալմամբ Հ. Ակինեան կը նշանակէ, այլ ՏԱՂԱՐԱՆ: